

ու երկայն պոչ, վախտ կռնակի վրայ ոյրուած, ինչպէս կը տեսնու պատկրներու մէջ. Այս այսանդափութիւնները ստացած են Աստուծոյ անէ ծքով: Սատանաները հրեշտակներու պէս աւելի արականի հանգամանք ունին, քան իգականի, թէև յաճախ կնոջ կերպարանքով կը յայտնուին, և այն արելի պառաւ կնոջ: Չ'պէտք է շփոթել փէրիները սատանաներու հետ, որովհետև առաջիններու նազումը շատ ուշ եղած է: կրնան կենալիցի մարդերու հետ, և զաւակներ ունենալ, մինչ սատանան. թ. զորիկ են այդ յատկութիւնն, ոչ ծնունդ ունին և ոչ մահ, ոչ հիւանդութիւն, և ոչ մարմնական աճում, ոչ կ'ուտեն, և ոչ կը հաշնեն: Ասոնք հրեշտակներու պէս յաճախ հրաշագործ են:

ՈՐԵԳԱԿԻ, ԼՈՒԾԻՆ ԵՒ ՌԱՑՂԵՐ

Արեգակը ստեղծուելէն մինչև Ըդամի ստեղծումը շատ աղօտ լոյս և տիրար ջերմութիւն ունել: Ասոնք կետրոնացած չէին մէկ կ'ատի վրայ, ինչպէս այժմեան գունդի մէջ, այս ցրուած ամբողջ տիեզերքի մէջ: Աստուած նկատելով որ արեգակը լուսաւորենու և տաքացներու մէջ բոլորովին անպէտք է՝ մտածեց մէկ կ'տի վրայ ամփոփել սփոռուած լոյսն ու ջերմութիւնը, բաց չ'գտնուելով այնպիսի աման մը որ պարփակէր զանոնք և մինչեւ աշխարհքի վախճանը դիմանալու—չ'վնասուերու ոչ ունենար' վերցուց Ըդամի մարմնի կաւի մնացորդը, շենեց կնում մը և անոր մէջ լեցուց լոյսն ու ջերմութիւնը, զրաւ երկնքի մէջ զայն, բերանը դարձուց դէպի երկիրը, որ այնուհետև կը հուէ երկրի վրայ այդ կրկին բարիքները: Մեզէ երկցոյը—արեգակ, այդ կնում է, կամ աւելի ճիշդ՝ կնումի բերանը: Արեգակը իր ցերեկուան ճամբորգութենին յոդնած, և շոգած, կերթայ երեկոյն արևմտեան կողմը, ովկիանոսի ջրի մէջ լորանալու—գովութիւն և հանգըստութիւն գտնելու: Իր ընթացքը այնքան արագ է: որ մէկ ժամուան մէջ եօթի աւերակ քաղաք կանցնի: Արեգակնան մեծութիւնն է «եօթիալ և կէս»: Այս 7^{1/2}, կազը ալսպէս կը բացատրուի, ոմանք կը հաստատեն, թէ 7^{1/2}, կալի (ցորենի կալ, կալենու տեղ) յափ է, իսկ ոմանք կ'ըստն թէ «եօթ կալ ու կէս»ը կը նշանակէ «եօթ ու կէս» անգամ մեծ մեր երկրէն: Կան հաստատողներ որ լուսինը 7^{1/2}, և արեգակը 25^{1/2}, կալի (ցորենի կալ) յափ են:

Արեգակը առաւօտուն երբ ծովէն գուրս կ'ելնէ՝ երկրին շատ մօտիկ է, ջերմութիւնը սաստիկ, քանի որ դեռ չէ ցրուած երկրի վրայ, և սպառուած: Այդ միջոցին երկիրը պիտի վառէր, մոխիր դարձնէր, եթէ անոր դէմը շեղներ մեծ թռչուն մը, (թռչունի անունը չ'կրցանք

ինանալը), որ ինքը ինքը արեգական ջրամութեան դէմը տալով՝ իւր թևերով հով կ'ընէ երկրի վրայ, մինչև արեգակը կը բարձրանայ երկնքի մէջ տեղը, երկրէն կը հեռանայ, և իր տաքրւթիւնը ցրուելով՝ կ'սկսի պակսիր: Մինչև այդ ատեն թաշունի թևերը կը խանձի արդէն, ու կիսամինդան ովկիսնոսի մէջ կ'իջնայ, կը հովանայ, թևերը և այլած տեղերը կ'առողջանան, այնպէս որ հետեւալ առաւօտ բռնորովին կազզուրուած՝ պատրաստ կ'ըլլայ զարժեալ արևի դէմը դուրս գալ և հով ընել երկրի վրայ Ացապէս աշխարհի սկիզբէն մինչև վախճանը նա կը պաշտպանէ երկիրը այրուելէն:

Երեգակը և լուսինը քոյր և եղբայր են եղեր: Անգամ մը գնացած են գետի ափը լուսանալու: Զարասիրու եղբայր լուսինը ուզերէ է իւր քոյր արեգակի մերկութիւնը տեսնել: Այս նպաստակով ջրէն շուտ դուրս է եկեր, և սպասեր է որ քոյրն ալ դուրս զայ, ու տեսնէ զայն: Սահայն քոյրը իմանալով եղրօր զիտաւորութիւնը՝ ամօթէն երկինքն է եկեր Լուսինը անոր ետևէն գնացեր է, և մինչև հիմայ դեռ ետևէն ինկած՝ կ'ուգի հասնիլ: բայց չաշօղիր: Երեգակը իւր սուր ասեղներով կը ծակէնէ: թէ լուսինի և թէ ամէն մարդու աչքերը, երբ իրեն նայն:

Լուսինը չար տղայ մէ եղեր, գեռ կաթնկեր: Մայրը խմոր շաղած ժամանակ կը պահանջէ անկէ որ իրեն ծիծ տայ, և սա բարիանալով լուսնն որդիի վրայ խմորու մեռքով ապատակ մը կը զարնէ երեսին: Լուսինը այդ պատժէն խռոված՝ երկինքը կ'ելնէ, և մինչև հիմայ դեռ կ'երկի իւր մօր խմորու մեռքի հետքը:

Ժողովրդին ծանօթ են այլաւայ անուններով աստղեր: Զողիսակոսի 12 նշանները, աստեղատունները, որոց վրայ գուշակութիւններ կ'ընեն, տարուան բերքի, կիմայի, հիւանդութեան, պատերազմներու, և այն, մասին: Այս արդէն յատնի է կիէմէտի-երազահաններ ով: Գիտեն «Լուսու աստղը», որ երբ երկնքի մէջ տեղը հասնի, կրյունայ: «Ճամբրաններ»: ըլուսու աստղի» (Օրուսեակ) չորս կողմը: «Քարվան կուրուսը», որ ըլուսու աստղէն, շուտ դուրս կուգայ և անոր պէս մէծ ու փայտուն է: Անգամ մը լինաներու մէջ հանգստացող կարաւանը դիշեր ատեն կարծելով թէ արևելքէն ենողը «Լուսու աստղն» է, կ'ելնին ճամբայ կ'երթան, կը մոլորին անտառներու մէջ և աւագակներն էր կողոպտուին, ու կը ջարդուին: Այս պատճառով այդ աստղը «Թեարդան կուրուս» (կորսնցնոյ) ըստած է, «Բուլքար համաստեղութիւն մէ», որու վրայ այլ և այլ գուշակութիւններ և հաշիւններ կ'ընեն: «Պոյով աստղեր» (գիսասոր), որ չարագուշակ են:

«Լուծք, արջ, հօտաղ, և հացւոր», Արջ համաստեղութիւնն է: Երկրագործը արտոր կը հերկէ, հացւորը տնէն հաց կը բերէ երկրագործին, արջը անոր առաջ կ'ելնէ, պատռատերու, լափելու համար, երկրա-

գործը կը նկատէ այդ վասնը, և հօտաղը կ-ը լդրի հացորին օգ-
նելու չամասանեղութիւնը այս տեսարանը ցուց կուտաց:

«Եօթ ողբու սեղան», եօթը ասադիր օգականն շարուած են, որ եօթը եղացաներ են եղեր «Խայ», որ կազմուած է կապաշտ թագառի մը ժամանակի, (Կոստանդիանոսի). անոր աչքին երևցեր է, որով նա քրիստոնէ ութիւնը ընդուներ է. «Քօջի (Ծոյ) հօտու աստղը, (Նրեալի): Տանաէրը կը պատուիրէ իւր հօտովինը որ եզները տանի արտօնելու, մինչև աստղելու երևնալլը, ապա թերէ: Մոյ հոտազը տեսնելով արև մատեան կողմը փայլող աստղը, արևի մայր մտած տանեն՝ ան մէի եզները տունը կը քերէ: Այդ ժամանակին մինչեւ հիմոյ այդ հոտով «Քօջի հօտու աստղ» կ'ըսուի «Աէցում-Ղաճում», երկու իր հարները պղջիկը կը պատուիրէ տղային որ երթաց, իրենց ամարանուաց, եղէքնուալի մէջ սպասէ մինչև իւր գալը, իւր Ծնողաց հետ: Սախայն Ծնողը ի իմանալով այդ՝ ամարանոց չեն երթար, հետեւ արար աղջիկն ալ տունը կը մնաց: Տղան այնքան կ'սպասէ, քայլացածու բացօթնեաց, որ վիրշապէս կը մեռնի, Տաջորդ գարնան երբ աղջիկը իւր Ծնողաց հետ ամարանոցը կուգաչ՝ կը տեսնէ իւր սիրահարը մեռած և ուղերձը վրայ կանցուն, եղէզը ուղերէն Տակած, ու զիսէն դուրս երած: Աղջիկը կսկիծէն կը մեռնի և երկու ըբ միասին երկու աստղը կ'ըլլան, կելնեն երկինքը, տարեկան անգամ մը շրջան կ'ընեն երկինքի մէջ, Համբարձման հինգշարթի կիշերը իրարու կը հանդիպէն, կը համբուրուին, ու գարձեալ կ'երթան շրջան ընկնու Այդ անենդ գոհերու իրար գտնելու, ուրախանալու և Համբուրուելու վրայ՝ ամեն գերքի բոլոր անշուէ տուարիաները, աստղեր, երկրի լեռներ, ձորեր, քարեր, Տառեր և այն մեծ ուրախութիւն կ'զգան: և իրենք ալ իրարու հետ կը համբուրուին Քանի մը դժուար միջոցներ կան, որոց եթէ կարենայ դիմանալ, և պէտք եղած կերպով կատարել մարդ, անպատճառ կը տեսնէ այդ զիշերուան մէջ տեղի ունեցած համբոյը տալլը և ինչ որ խնդրէ կստանայ, խելք, գիտութիւն, այևապ լեզուներ, — (մարդերու, անաստոններու) Հարաստութիւն և այն և այն:

«Ղուղղուխ» աստղը (Ընկի), որ ցանքին և կենդանիներուն վը-նասներ կուտազ ասոր վրայ գուշակութիւններ և այն հաշվաներ կ'ը-նեն. «Ծառ-Պատրա», երբ դուրս գայ, գիծինը գութաններ կը լծնի. Կան նաև արեգակնա յորս կողմը շորš աստղեր. Ընկի, Մենիկ, Անիկ, Տէնիկ: (2^րկրօնանը իմանայ թէ թէ բնչ բանի համար են):

Նայ նաև «Զար աստղը» որու իշխանութեան ենթարկուած են
եօթք բարի աստղեր, որոնք կը դատավին երինքի եօթ շարիկերու մէջ,
Այս բարի աստղերը կիշխան բնական քանի մը վատ երևողթներու վրաց
Առաջինը կ'իշխէ քամիկի վրաց, որ իւր այլեաց երեսովներու վ - խոր-

շախով, ցրտով, փոթորիկով, բուլ բով. (Թիվի) երկրին մեծամեծ վնասներ չ'պատճառաւէ, Երկրորդը՝ կայծակի վրայ Երրորդը՝ կրակի վրայ Չորրորդը՝ ջրի - ձուիր, ալեկոծութեան. և որ զվարաւորն է՝ երկնքի մէջ գանուած «Սև ջրի» ովկիսնոսի վրայ, որ իրենց սահմանէն դուրս չ'ելնեն, և երկիրը չ'ողոյին։ Հինգերորդը կարիւտի, ձիւնի և այն վրայ Վեցերորդը մնասակար միջատներու, թաշուններու և գագաններու վրայ, որ մարդերուն վնաս չ'հասցնեն Խօթներորդը՝ բարդի վրայ Սա կուտայ բաղդաւորութիւն, առողջութիւն, հարատութիւն և այն։ Խոկ «Ճար ասաոր» իշխուլով այս եօթնի վրայ՝ երբեմն անգօր կընէ անոնց ազգեցութիւնը, յարութիւններ առաջ կը բերէ, օր ցուրտ, խորշակ, փոթորիկ, կայծակի վնաս, հրդեհ, ալեկոծութիւն ծովի մէջ, ու ջուր, ինչպէս ջրհեղեղի ժամանակ, կարիւտ, միջատներու և այ կենդանիներու աւեր, մարդերու, դժբաղդութիւն, հիւանդութիւն, աղքատութիւն և այն և այն։ «Ճար ասաող» կը գտնուի երկնքի եօթներորդ յարկին մէջ. բոյոր աստղերէն բարձր։ «Սահմամօր յէրդ» (յարդգոյ) ունի այլևայ բացարարութիւններ որոցմէ յիշենք հետեւալիները։ Օմայիկոս սահմամայր մը իւր քառորի յարդոցէն միշտ յարդ կը գողնար, յիներով իւր զոյնոցի մէջ, որովհետև աղքատ է եղեր, յէ կրցեր զընել։ Անգամ մը քաւորը կը տեսնէ իւր սահմամօր գողութիւնը, և վերջինս ամօթի էն երկինքի կ'ելնէ, ու փախչելով կ'սկսի թափել յարդը։ Հետքը այժմ կ'երեւէ. Կը հաստատն նաև, որ այդ երեւածը երկնքի ևս ջրի ովկիանոսի պատառուածքի կարը կամ հետքն է. Զրհեղեղի ժամանակ երդ Աստուած հրամացեց երկնքի և երկիցի ու ջրերուն, ողողել երկիրը, երկինքը ծացրէ ծայր պատառեցաւ, «Սև ջրի» ովկիանոսը հուսեց երկիրի վրայ, խոկ յետոյ Աստուած այդ պատառուածքը կարեց, որու հետքը կ'երեսի այժմ։

Խոկ երկնքին երեսը դրուած միւս աստղերը մարդերու աստղերն են, իւրաքանչիւր մարդուն մէկ հատ. կը ծնին, և «կընկնին»։ Կը մեռնեն։ Եթէ մարդը առողջ է, բաղդաւոր է, հարուսա է, իր աստղը փայռուն և գեղեցիկ կ'ըլլայ, և կ'սկսի խաւարեց, փոքրանալ աստղը՝ երբ մարդը հրանդութիւն, դժբաղդութիւն և աղքատութիւն կ'ունենայ։ Բոլորովին կը խաւարի, կ'ոչնչանայ, «կընկնի» աստղը երբ մարդը կը մեռնի։ Երկնքի երեսի վրայ ցայտող և ակոսող լուսաւոր գները ընկնող աստղեր են, որոց տէրեր—մարդիկ այդ բոպէին կը մեռնին։ Ժողովրդական «գիտնականները» և «թրղթաբացները» (թրղթ=պիրք բացող, կախարդ), որոնք «երկինք և գետինք կը քննեն» կրնան ճանշնալ իրենց դրքերով իւրաքանչիւր մարդու աստղը, և անոր փայլէն գուշակի մարդու զվլուն գալիքը, մահուան օրը և այն կրնան նաև հեռու երկիր դնացողի մը աստղէն իմանալ անոր ինչ վիճակ ունենալը։